նութեան և պնդեսցեն 'ի նշանաւոր տեղիս առ 'ի տեսարան անցաւորաց, զի ամենեքեան ծանիցեն առն այն ստախօս և երդմնազանց, և եթէ վկայութիւն սուտ գոցի 'ի վերայ քրէական մեղաց, որ 'ի պատճառէ վկայութեան նորա բարձցեալ իցէ կեանս մեղաւորի, և ապա հոչակեսցի ստութիւն վկային, նոյն սուտ վկայն մահու մեռցի։

ԳԼՈՒԽ ՆԷԹ.

Ով որ որ չափազանց վարեսցէ կեանս իւր եթէ պճնիլ և հանդէս առնել, և դատարկաբանութեամբ և զամենայն զոր ինչ իրօք տալ վատ նշաւակ ժողովրդոց յարուցանել նախանձ արանց բարեաց, նախ և երկրորդ անգամ խրատեսցի քաղցրութեամբ 'ի մայր դատաւորէ աշխարհին, եթէ նա ոչ զսպեսցի վարքն իւր՝ մտցէ 'ի բանտ մինչ ընդունի բարեպէս կալ ամենայն աւուրս կենաց իւրոց։

ԳԼՈՒԽ ՆԶ.

Որում զօրագլուխ և կամ զինուոր եթէ յանդգնեսցի հրամանի Տեառն իւրոյ 'ի ժամանակի պատերազմի և 'ի ժամու ճակատամարտի՝ մտցէ 'ի բանտ և եթէ բարձրացուսցէ ձեռս իւր 'ի վերայ Տեառն իւրոյ և հարկանէ, իսկոյն մեռցի։